Արձանագրություն N 2
Երևան քաղաքի Մարգարյան փողոցի զբոսայգու ջրավազանի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ՀԲՄԾՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

21.08.2019թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սարգսյան /գնահատող/, Ա. Հովհաննիսյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/
Բացակայում էր
Հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Հարությունյան /բացող/
Ն. Կիրակոսյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի օգոստոսի 21-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
2	«ԳՈԼԴ-ՆԵԹ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևան քաղաքի Մարգարյան փողոցի զբոսայգու ջրավազանի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	1736000	1000000	200000	1200000
«ԳՈԼԴ-ՆԵԹ» ՍՊԸ		980000		980000

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Կիրակոսյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	Բավարար
«ԳՈԼԴ-ՆԵԹ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

5. Ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ԳՈԼԴ-ՆԵԹ» ՍՊԸ -ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ –ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

6. Պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցելու մասին

(Ա. Կիրակոսյան)

6.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել պետական եկամուտների կոմիտե:

6.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 2-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ _____ Ա. Սարգսյան

_____ Ա. Հովհաննիսյան

_____ Ա. Հարությունյան

Քարտուղար՝ _____ Ն. Կիրակոսյան